աւանդութեան, Ս. Գրիգոր ինքն օծեց այդ թուրն և դրեց Սեպուհի վերայ. Զէնն արքայական, ասում է Յովհան, զսպանմանն գործի կենաց արքային յօրինէր ի կենաց գործիս, և կայ այժմ ի պահեստի ի քեզ, ով բարեբախտ և ամենագով Սեպուհ (տես և շարական «խորհուրդ խաչելոյն» և այլն). ս. Տրդատի այդ կայծակէ կամ հաւլունի թուրն, ասում են, ինքն հսկայազօր արքայն հանեց մէկ դի նետեց, երբ ուզում էր առանձնանալ՝ Սեպուհի վերայ Ս. Գրիգորի հետ միասին ճգնելու. բայց թուրը գետին չընկաւ, այլ օդի մէջ կախուած մնաց և այնպէս լոյսի նման մինչև օրս ցոլում է Սեպուհի վերայ, փայլատակներ արձակելով երբեմն գագաթի բարձրութիւնից *։ Սեպուհի զանազան մասերն և յատկութիւնները դրուատելուց յետոյ Երզնկացին իւր խօսքն ուղղում է Դարանաղեաց գաւառին, յիշում է նորա բնական հարստութիւնը, բացատրելով գաւառի անունն ա ղ ի դ ա ր ա ն խօսքերով, նկարագրում է այն աղբիւրը, որ ամառն հոսելիս սառչում պնդանում է, իսկ ձմեռն ընդհակառակը միշտ տաք է և հեղանիւթ, գովում է գաւառի ծաղկաւէտ լեռները, ջրաբուխ ձորերը, ջրաղի դարանները և այլն, շեշտելով թէ այդ հրաշալիքներով չէ որ Դարանաղեաց գաւառը գովելի է, այլ նորանով, որ այնտեղ թաղուեցաւ Ս. Գրիգոր, Այստեղ Եր-

* Թորոս Աղբ. Բ։